



ԳԱՆԱՏԱՐԱՅՈՑ ԹԵՄ DIOCÈSE ARMÉNIEN DU CANADA

ԿԱՆՏԵԳՂ

ՍՔ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԱՈՒՋԵՆՈՐԴԱՆԻՍ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ




GANTEGH BULLETIN DU DIMANCHE DE LA CATHÉDRALE
ARMÉNIENNE ST. GRÉGOIRE L'ILLUMINEUR DE MOTRÉAL

ԿԻՐԱԿԻ 21 Յունիս 2020

168

DIMANCHE, 21 Juin 2020



ՍՔ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2
Website: www.saintgregory.ca / E.mail: saintgregorychurch@gmail.com
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

**Գ ԿԻՐԱԿԻ ԶԿՆԻ ՀՈԳԵԳԱԼՍԵԱՆ
ԲԱՐԵԿԵՆԴԱՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԻՈՐՉԻ ՊԱՀՈՑ
TROISIÈME DIMANCHE APRÈS LA PENTECÔTE.
PRÉMIÈRES DU JÉJÛNE DE SAINT GRÉGOIRE L'ILLUMINATEUR**

Աստուածաշունչի Ընթերցումներ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԱԼԻ ՀՌՈՎՄԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ

ԳՐԱԾ ՆԱՄԱԿԷՆ (6.12-23)

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ

ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ (12.1-8)

Les lectures de la Bible d'aujourd'hui :

ROMAINS 6.12-23

MATTHIEU 12.1-8

Պատարագիչ՝

ԱՐԺ. Տ. ԳԷՈՐԳ ՔՀՆՅ. ԱԲԵԱՆ

Célébrant:

RÉV. PÈRE GEVORG APYAN

Առաւօտեան Ժամերգութիւն Ժամը-

Office Matines à

9:30-ին

9h30

Ս. Պատարագ- ուղիղ սփռում Ժամը-

La Sainte Messe – En direct à

10:30-ին

10h30

Յոգեհանգիստ - ուղիղ սփռում Ժամը-

Office de Requiem – En direct à

12:30-ին

12h30

DIACRES – ACOLYTES

Organiste: Mme Houry Manougian

ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

**LES LECTURES
DE DIMANCHE**



**THE SUNDAY
READINGS**

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԱԼԻ

ՀՈՌՎՄԱՍՅԵՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱՏ ԱՄՄԱԿԷՆ (6.12-23)

Ուստի ա՛ լ մեղքը թող չթազաւորէ ձեր մահկանացու մարմնին վրայ, որ անոր ցանկութիւններուն հնազանդիք: Եւ ձեր անդամները մեղքի մի՛ ընծայէք, անիրաւութեան գործիք ըլլալու, հապա ձեր անձերը Աստուծոյ ընծայեցէք որպէս թէ մեռելներէն ողջնցած եւ ձեր անդամները արդարութեան գործիքներ՝ Աստուծոյ: Քանզի մեղքը ձեր վրայ պիտի չիշխէ. վասն զի օրէնքի տակ չէք, հապա շնորհքի տակ:

Ուրեմն ի՞նչ. մե՞ դք գործենք քանի որ օրէնքի տակ չենք, հապա շնորհքի տակ: Քա՛ւ լիցի: Չէ՞ ք զիտեր թէ որո՞ւ որ անձերնիդ իբր ծառայ ընծայէք հնազանդելու, ծառայ կ'ըլլաք անոր՝ որուն որ կը հնազանդիք, թէ մեղքի՛ որ մահուան կը տանի եւ թէ՛ հնազանդութեան որ՝ արդարութեան: Բայց գոհութիւն Աստուծոյ, որ թէեւ դուք մեղքի ծառայ էիք, սակայն սրտանց հնազանդեցաք այն վարդապետութեան գաղափարին, որ ձեզի յանձնուեցաւ: Ուստի դուք մեղքէ ազատուելով՝ արդարութեան ծառայ եղաք. Մարդու սովորութեան պէս կ'ըսեմ՝ ձեր մարմնին տկարութեանը համար. քանզի ինչպէս ատեն մը ձեր անդամները անօրէնութեան ընծայեցիք՝ պղծութեան եւ անօրէնութեան ծառաներ ըլլալու, ա՛ յնպէս հիմա ձեր անդամները սրբութեան ընծայեցէք՝ արդարութեան ծառաներ ըլլալու: Վասն զի երբ դուք մեղքի ծառաներ էիք, արդարութենէ ազատ էիք: Ուրեմն այն ժամանակ ի՞նչ պտուղ ունէիք այն բաներէն՝ որոնցմով հիմա կ'ամչնաք. վասն զի անոնց վերջը մահ է: Բայց հիմա մեղքէ ազատուած եւ Աստուծոյ ծառաներ եղած՝ ձեր պտուղը ունիք սրբութիւնով ու վերջը յաւիտենական կեանք: Քանզի մեղքին վարձքը մահ է, բայց Աստուծոյ ձրի պարգևը յաւիտենական կեանք՝ մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսին ձեռքով:

ԱԻԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄՍՏԹԷՈՍԻ (12.1-8)

Յիսուս շաբաթ օր մը կ'երթար արտերուն մեջէն, երբ իր աշակերտները անօթեցան, սկսան ցորենի հասկեր փրցնել եւ ուտել: Փարիսեցիները երբ տեսան, ըսին անոր. «Ահա քու աշակերտներդ կը գործեն, մինչդէռ արսօնուած չէ շաբաթ օրը գործել»: Ան ալ անոնց ըսաւ. «Չէ՞ ք

կարդացեր դուք Դաւիթին ըրածը: Երբ անօթեցան ինք ու անոնք որ իրեն հետ էին. Մտաւ Աստուծոյ տունը եւ առաջաւորութեան հացերը կերաւ, որ ո՛չ իրեն օրինաւոր էր ուտել եւ ո՛չ անոնց որ իրեն հետ էին, բայց միայն քահանաներուն: Կամ թէ օրէնքին մէջ չէ՞ք կարդացեր, որ քահանաները շաբաթ օրերը տաճարին մէջ շաբաթը կը պղծեն ու անմեղ են: Բայց ձեզի կ'ըսեմ թէ այստեղ տաճարէն մեծ մէկը կայ: Եթէ գիտնայիք թէ ի՛նչ ըսել է 'Ողորմութիւն կ'ուզեմ ու ո՛չ թէ զոհ', այն աստէն անպարտները չէիք դատապարտեր. Քանզի Որդին մարդոյ շաբաթին տէրն է»:

ROMAINS 6.12-23

Que le péché ne règne donc point en votre corps mortel, pour lui obéir en ses convoitises. Et n'appliquez point vos membres pour être des instruments d'iniquité au péché; mais appliquez-vous à Dieu comme de morts étant faits vivants, et [appliquez] vos membres [pour être] des instruments de justice à Dieu. Car le péché n'aura point d'empire sur vous, parce que vous n'êtes point sous la Loi, mais sous la Grâce.

Quoi donc? pécherons-nous parce que nous ne sommes point sous la Loi, mais sous la Grâce? A Dieu ne plaise! Ne savez-vous pas bien qu'à quiconque vous vous rendez esclaves pour obéir, vous êtes esclaves de celui à qui vous obéissez, soit du péché [qui conduit] à la mort; soit de l'obéissance [qui conduit] à la justice? Or grâces à Dieu de ce qu'ayant été les esclaves du péché, vous avez obéi du cœur à la forme expresse de la doctrine dans laquelle vous avez été élevés. Ayant donc été affranchis du péché, vous avez été asservis à la justice. (Je parle à la façon des hommes, à cause de l'infirmité de votre chair.) Comme donc vous avez appliqué vos membres pour servir à la souillure et à l'iniquité, pour [commettre] l'iniquité; ainsi appliquez maintenant vos membres pour servir à la justice en sainteté.

Car lorsque vous étiez esclaves du péché, vous étiez libres à l'égard de la justice. Quel fruit donc aviez-vous alors des choses dont maintenant vous avez honte? certes leur fin est la mort. Mais maintenant que vous êtes affranchis du péché, et asservis à Dieu, vous avez votre fruit dans la sanctification; et pour fin la vie éternelle. 23Car les gages du péché, c'est la mort; mais le don de Dieu, c'est la vie éternelle par Jésus-Christ notre Seigneur.

MATTHIEU 12.1-8

En ce temps-là Jésus allait par des blés un jour de Sabbat, et ses Disciples ayant faim se mirent à arracher des épis, et à les manger. Et les Phariséens voyant cela, lui dirent : voilà, tes Disciples font une chose qu'il n'est pas permis de faire le jour du Sabbat. Mais il leur dit : n'avez-vous point lu ce que fit David quand il eut faim, lui et ceux qui étaient avec lui? Comment il entra dans la maison de Dieu, et mangea les pains de proposition, lesquels il ne lui était pas permis de manger, ni à ceux qui étaient avec lui, mais aux Sacrificateurs seulement? Ou n'avez-vous point lu dans la Loi, qu'aux jours du Sabbat les Sacrificateurs violent le Sabbat dans le Temple, et ils n'en sont point coupables? Or je vous dis, qu'il y a ici [quelqu'un qui est] plus grand que le Temple. Mais si vous saviez ce que signifient ces paroles : je veux miséricorde, et non pas sacrifice, vous n'auriez pas condamné ceux qui ne sont point coupables.

Car le Fils de l'homme est Seigneur même du Sabbat.

ՇԱԲԹՈՒԱՅ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆԸ

Աշխատանքը այն հանճարն է, որ աշխարհիս տգեղութիւնը գեղեցկութեան կը փոխէ: Աշխատանքն է, որ մեծ անեծքը կը փոխէ մեծ օրհնութեան: Այսուհետև աշխարհիս տերերը աշխատանքն ու գիտութիւնն են: Մեր առաջին պարտականութիւնը աշխատանքն է, երկրորդը՝ բարութիւնը:

Ֆրանսիսք Սարսէ

Մեր ամենալաւ հարստութիւնը մեր գոհունակութիւնն է:
Շէյքսպիր

Ազգ մը լաւ կը կառավարուի, եթէ ժողովուրդը հնազանդի առաջնորդներուն, և առաջնորդներ հնազանդին օրէնքին: Միայն ան կրնայ առաջնորդ ըլլալ, ով երբեք չի կորսնցներ յոյսը:
ճէֆըրսըն

Արդարութիւնը անմահ, յաւիտենական եւ անփոփոխելի է Աստուծոյ նման: Արդարութիւնը աշխարհի ներդաշնակութեան բանալին է. առանց անոր ամէն ինչ կ'ընթանայ խառնաշփոթ եւ ձախող:
ճէֆըրսըն



Հոգևոր Հովիվի Պատգամը

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, ամէն:

«Ձողորմութիւն կամիմ եւ ոչ զոհ»

Յարգելի հաւատացեալներ,

Աւետարանական հատուածը, որուն մասին այսօր պիտի խօսիմ, Մատթէոսի աւետարանէն է. «Յիսուս, շաբաթ օրով, անցաւ արտերու միջոցով. Իր աշակերտները քաղցած էին եւ սկսան հասկ պոկել եւ ուտել: Փարիսեցիները երբ այս տեսան, Յիսուսին ըսին. «Ահա քու աշակերտներդ կ'ընեն բան մը, որ շաբաթ օրը օրինաւոր չէ ընել»: Եւ Յիսուս ըսաւ անոնց. «Դուք չէ՞ք կարդացած, թէ երբ Դաւիթը, քաղց զգաց ինք եւ անոնք, որոնք իրեն հետ էին: Թէ ինչպէս մտաւ Աստուծոյ տունը եւ կերաւ առաջաւորութեան հացը, որ ուտելը օրէնք չէր ո՛չ անոր եւ ո՛չ ալ անոր հետ եղողներուն համար, այլ միայն քահանաներուն համար: Կամ թէ Օրէնքին մէջ չէ՞ք կարդացած, որ շաբաթ օրերը տաճարին մէջ քահանաները կը պղծեն շաբաթը եւ անմեղ են: Բայց կ'ըսեմ ձեզի, որ այստեղ տաճարէն աւելի մեծ մէկը կայ: Եւ եթէ հասկնայիք, թէ ի՛նչ կը նշանակէ Աստուծոյ այս խօսքը. «Ողորմութիւն կը կամենամ եւ ոչ՝ զոհ», ապա անմեղներուն չէիք դատապարտեր, որովհետեւ Մարդու Որդին տէրն է շաբաթ օրուայ» (Մտթ. 12:1-8):

Սիրելիներ, եթէ մի քանի գլուխ ետ երթանք նոյն աւետարանին մէջ, ապա կը հանդիպինք Յիսուս Քրիստոսի երկրային կեանքի այն հատուածին, ուր Ան կը հանդիպի Մատթէոսին, որ թերեւս մաքսաւոր էր եւ ըսելով, որ Իրեն հետեւի, անոր տունը կ'երթայ ու միւս մաքսաւորներուն հետ սեղան կը նստի: Երբ փարիսեցիները կը տեսնեն այս, կը սկսին քննադատել Անոր, որուն ի պատասխան, կրկին Օսեյի մարգարէութեան տողերը կը մէջբերել՝ ըսելով.

«Գացէ՛ք, սորվեցէ՛ք, թէ ինչ կը նշանակէ՝ ողորմութիւն կը կամե-
նամ եւ ոչ՝ զոհ» (Մտթ. 9:9-13):

Սիրելի՛ հաւատացեալներ, ինչպէս գիտենք փարիսեցիներն ու օրէնագէտները շատ խստօրէն կը հետեւէին օրէնքի կատարման եւ անոնց պարագային այդ բառին բուն իմաստով դարձած էր օրէնքի տառի կատարում, այսինքն կարծես վերածուեր էր ընդամենը արհեստագիտական գործողութեան, որուն մէջ տեղ չունէր զգացմունքային մօտեցումը: Եւ այս օրինակին մէջ է, որ այսօր կը դիտարկենք, կը բախինք այդ չոր ու խստասիրտ վերաբերմունքին, որուն սակայն հակառակեցաւ Քրիստոս: Այսպիսով, ո՞ր մէկն էր այստեղ խնդիրը: Փարիսեցիները կը տեսնէին Քրիստոսի աշակերտները, որոնք խախտած էին օրէնքը՝ շաբաթ օրով ցորեն քաղելով եւ ուտելով: Այս գործողութեան մէջ ցորեն քաղելը անոնք որպէս հունձք կը տեսնէին, ավերու մէջ տրորելը կալել կը համարէին, իսկ այդ աւելորդ մղեղը մէկ կողմ թափելն ալ՝ քամհարել: Այսինքն ամբողջ աշխատանքային ընթացք մը, որ արգիլւած էր շաբաթ օրը կատարել: Իսկ Քրիստոս այս ամբողջ բարդութիւններու ետին տեսաւ իր սոված աշակերտները միայն, որ իրենց Տիրոջ ետեւէն շրջելով, յաճախ կը մոռնային ուտելու մասին: Եւ գրթաց անոնց Աստուծոյ Որդին, քանզի «Աստուած գթասիրտ է» (Ղուկ. 6:39): Եւ փարիսեցիներուն ալ խրատեց՝ ըսելով, որ Աստուծոյ համար մարդու հոգեւոր վիճակը աւելի կարեւոր է, քան այն արտաքին բարեպաշտութիւնը, որ անոնք ունէին:

Մեր Տէր Յիսուս Քրիստոս Դաւիթ արքային օրինակը բերաւ, որ քահանայէն խնդրեց առաջաւորաց հացէն տալ իրեն եւ իր ծառաներուն, քանզի բոլորովին ուտելիք չունէին, իսկ այդ հացը սուրբ կը համարուէր եւ միայն քահանաները իրաւունք ունէին ուտել անկէ: Բայց այդ դէպքին Դաւիթ թագաւորը իր ծառաներու կեանքին փրկութիւնը աւելի արժեւորեց, քան օրէնքը բառացիօրէն կատարելը, եւ այդ ներուցաւ անոր: Նոյնն էր նաեւ Քրիստոսի աշակերտներու պարագան, բայց Տէրը գիտէր, որ փարիսեցիները ամենեւին ալ բարի տրամադրուածութիւն չունէին եւ միայն աշակերտներու սոված ըլլալու հանգամանքը մատնացոյց ընելը բաւարար չէր ըլլար անոնց համար, ուստի այդ յայտնի պատմական կերպարին օրինակը յիշեցուց անոնց՝ խօսքը տեղ հասցնելու համար: Այս օրինակով Քրիստոս կամեցաւ ցոյց տալ, որ ողորմածութեան դրսեւորումը այնքան կարեւոր էր ու Դաւիթի գործողու-

թիւնները այնքան արդարացած էին, որ նոյնիսկ քահանան թոյլ տուաւ Օրէնքը խախտել: Բացի այդ, Դաւիթի օրինակին մէջ խօսքը ոչ թէ շաբաթ օրը խախտելու մասին էր, որ աշակերտներու պարագան էր, այլ սուրբ հացին, որ շատ աւելի լուրջ հարց էր:

Իսկ յաջորդ օրինակը, որ Տէրը մատնացոյց ըրաւ, աւելի զօրեղ էր, քան առաջինը. «Շաբաթ օրերը տաճարին մէջ քահանաները կը պղծեն շաբաթը եւ անմեղ են»: Այսինքն այն փաստը, որ զոհ մատուցելու համար քահանաները պէտք է խարոյկ վառէին ու զոհ մատուցանէին շաբաթ օրով, այսինքն Օրէնքը խախտէին իւրաքանչիւր շաբաթ, կը ներուէր անոնց, իսկ Քրիստոսի աշակերտներուն, որ սոված էին՝ աններելի էր: Եւ վերջապէս Քրիստոս վերջին մեծագոյն փաստարկը բերաւ՝ ապացուցելու Իր աշակերտներուն անմեղութիւնը: Եթէ տաճարի ծառայողներուն համար ներելի էր Օրէնքի խախտումը, ուստի որքան առաւել ներելի էր այդ տաճարին Տիրոջ աշակերտներուն համար, որոնց Ինքն թոյլատրած էր: Իսկ եզրափակիչ խօսքն ալ վերջակէտ կը դնէր այդ բոլորին, ուր կ'ըսուէր. «Եթէ հասկնայիք, թէ ի՛նչ կը նշանակէ Աստուծոյ այս խօսքը. «Ողորմութիւն կը կամենամ եւ ոչ զոհ», ապա անմեղներուն չէիք դատապարտեր»:

Այո՛, սիրելիներ, հերթական անգամ Տէրը կ'ընդգծէ ողորմածութեան կարեւորութիւնն ու անգնահատելիութիւնը: Քանզի այս հասկացողութեան հետ սերտօրէն միահիւստած ու անբաժանելի են բազմաթիւ առաքինութիւններ, որ քրիստոնէայի անփոխարինելի զարդարանքները կը հանդիսանան: Քանի-քանի՛ անգամ սայթաքած ենք, յայտնուած մեղքի ծողակին մէջ ու այլ ելք չենք գտներ, քան Աստուծոյ ողորմածութիւնը հայցելը: Եւ բնական կը համարենք, որ Ամենակալը ամէն անգամ պիտի ներէ մեզի եւ օգնութեան ձեռք մեկնէ: Արդ, ինչո՞ւ բնական կը համարենք օգնութիւն ստանալը եւ ոչ՝ տալը: Հայրը ինչո՞ւ պէտք է ողորմած գտնուի ամէն անգամ, նոյնիսկ ամենազագրելի մեղքերու դէպքին, իսկ մենք նոյնիսկ ամենաչնչին վիրաւորանքը չենք կարողանար ներել մեր մերձաւորներուն: Ճիշդ այս պատճառով է Աստուծ Օսէէ մարգարէին ու Իր Որդիին շրթունքներով կ'ըսէ, որ ողորմութիւն կը կամենայ, այլ ոչ թէ զոհ: Այսինքն մեր Երկնաւոր Հայրը կը կամենայ, որ Իրեն ծառայելը միայն ծէսեր կատարելով ու անոնց մասնակից ըլլալով չսահմանափակենք, այլ հոգեւոր ծառայութիւն եւս ունենանք, որ կ'արտայայտուի իրար

նկատմամբ ունեցած բարի ու մարդկային վերաբերմունքով, սիրով, ներելու եւ օգնելու պատրաստակամութեամբ: Որովհետեւ արտաքին ծիսապաշտութիւնը երբեք չի փոխարիներ ներքին բարեպաշտութիւնը: Սակայն երկուքն ալ անհրաժեշտ են ու կը լրանան իրարմով: Մեր հոգիները ծարաւ են եկեղեցական խորհուրդներուն ու ծէսերուն, անոնց ժամանակ հնչող աղօթքին ու շարականներուն, Սուրբ Գիրքի ընթերցումներուն ու քարոզներուն, բայց այդ կենսաստու հոգեւոր սնունդը ստանալը միայն բաւարար չէ, սիրելի՛ հաւատացեալներ: Անոնք կեանքի պէտք է կոչել՝ սիրով եւ ողորմածութեամբ, քանզի ողորմածութիւնը սիրոյ պտուղներէն մէկն է:

Աներկբայ կերպով վստահ եմ, որ բոլորդ ալ կը հասկնաք, սիրելի՛ հաւատացեալ եղբայրներ եւ քոյրեր, որ ողորմածութիւն կամ ողորմութիւն ըսելով միայն նիւթական օգնութիւնը նկատի չունինք, քանզի այնչափ դիւրին կ'ըլլար գումար տալ կարիքաւորին եւ առաքելութիւնը աւարտած համարել: Բայց ողորմածութիւնը առաջին հերթին հոգեւոր ուժերու, սեփական հանգիստի եւ ժամանակի նուիրում կ'ենթադրէ, որովհետեւ երբեմն ծեր տատիկի ու պապիկի մը այցելելը կամ հիւանդի մը անկողինին մօտ անցուցած մէկ ժամդ աւելին կ'արժէ, քան ուղղակի գումար տալը ու մէկ կողմ քաշուիլը: «Ողորմութիւնը կը կանգնի դատաստանի առջեւ եւ ոչ միայն կը պաշտպանէ, այլեւ ճիշդ Իրեն, Արդար Դատաւորին որպէս դատապաշտպան կ'ունենայ», - կ'ըսէ Սուրբ Յովհան Ոսկեբերանը:

Քրիստոնէայ կնոջ մը մասին կը պատմեն, որ երբ անոր սկեսուրը անկողինի հիւանդ դարձաւ ու անոր երեխաները, կարծելով որ երկար ժամանակ պէտք է խնամեն իրենց մօրը, երես թեքեցին անկէ: Իսկ հարսը, Տիրոջ սէրը իր սրտին մէջ ունենալով եւ սկեսուրին գթալով, իր մօտ վերցուց ու սկսաւ հոգ տանիլ անոր: Մարդիկ կը ծաղրէին անոր՝ ըսելով, որ անխելքին մէկն է ու աւելորդ բեռ վերցուցած է իր վրայ: Իսկ ան չէր տրտնջար, այլ Տիրոջ պատկերը իր սկեսուրին մէջ տեսնելով՝ համբերութեամբ ու հոգատարութեամբ կը խնամէր անոր: Եւ որպէս արդիւնք, երեք ամիս ետք, Աստուած Իր մօտ վերցուց հիւանդին հոգին, իսկ մինչ այդ ծեր կինը այնքան օրհնեց իր հարսը, որ մինչեւ կեանքին վերջը կը բաւականացնէր անոր:

Արդ, սիրելիներ՝, այսօր կը մաղթեմ բոլորիս, որպէսզի հասկընանք, որ առաջին հերթին Աստուած ողորմութեան գործեր կ'ակրնկալէ մեզմէ: Հասկնանք, որ կատարելութեան ձգտելու, Աստուծոյ պատկերն ու նմանութիւնը մեր մէջ դրոշմելու, աստուածահաճոյ ընթացք ունենալու համար սահմանափակումներ չկան: Թող Ողորմած Աստուծոյ պատկերը օրինակ ըլլայ իւրաքանչիւրիս համար, որպէսզի ձգտինք մեր Երկնաւոր Հօր արժանի գաւակները ըլլալու ու ժառանգելու Անոր խոստացած Արքայութիւնը:

Մէր, շնորհ, խաղաղութիւն ամենեցուն, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Օրհնութեամբ՝
Տ. Դաւիթ Քինյ. Մարգարեան
Հոգեւոր Հովիւ

Pour le bien du Père et du Fils et du Saint-Esprit, amen.

"Je veux de la miséricorde et non du sacrifice."

Chers fidèles,

Le passage évangélique dont je vais parler aujourd'hui est tiré de l'Évangile de Matthieu. "Jésus a traversé les champs le jour du sabbat. Ses disciples avaient faim et ont commencé à se déchirer et à manger. Quand les pharisiens ont vu cela, ils ont dit à Jésus:" Voici, vos disciples font ce qui n'est pas légal de faire le jour du sabbat " . "Jésus répondit:" N'avez-vous pas lu ce que David a fait quand lui et ses compagnons avaient faim? Il entra dans la maison de Dieu, et lui et ses compagnons mangèrent le pain consacré, qui n'était pas légal pour eux, mais seulement pour les prêtres. Ou n'avez-vous pas lu dans la loi que le jour du sabbat, les prêtres du temple enfreignent le sabbat et sont pourtant innocents? Mais je vous le dis, quelque chose de plus grand que le temple est ici. Si seulement vous aviez connu le sens de «je désire la miséricorde, pas le sacrifice», vous n'auriez pas condamné l'innocent.

Bien-aimés, si nous remontons quelques chapitres dans le même évangile, nous tombons sur un passage de la vie terrestre de Jésus-Christ où il rencontre Matthieu, qui était encore percepteur d'impôts et dit qu'il

le suivra, sa maison ira et les autres douaniers. Il s'assoit à table. Lorsque les pharisiens voient cela, ils commencent à le critiquer, à qui, en réponse, il cite à nouveau les versets de la prophétie d'Osée, disant: "Allez, et apprenez ce qui est bon, et non pas ce qui est à venir" (Matt. 9: 9-13).

Chers croyants, comme nous le savons, les pharisiens et les législateurs ont strictement suivi la loi. Dans leur cas, le vrai sens du mot est devenu la lettre de la Loi; c'est-à-dire qu'il ne s'agissait que d'une activité professionnelle dans laquelle il n'y avait pas d'espace émotionnel. Dans cet exemple que nous considérons aujourd'hui, nous rencontrons cette attitude sèche et dure à laquelle le Christ s'est cependant opposé. Alors, qui était le problème ici? Les pharisiens ont vu les disciples du Christ, enfreindre la loi en ramassant et en mangeant du grain du champ comme violant le sabbat. Tout un processus de travail interdit samedi. Et le Christ, après toutes ces difficultés, n'a vu que ses disciples affamés qui, après avoir suivi leur Seigneur, ont souvent oublié de manger. Et que le Fils de Dieu ait pitié d'eux, car "Dieu est miséricordieux" (Luc 6:39). Il a également instruit les pharisiens, disant que la condition spirituelle de l'homme est plus importante pour Dieu que la piété extérieure qu'ils avaient. Notre Seigneur Jésus-Christ a apporté l'exemple du roi David, qui a demandé au prêtre de lui donner, ainsi qu'à ses serviteurs, du pain de tête, car ils n'avaient pas de nourriture du tout, et ce pain était considéré comme sacré, et seuls les prêtres avaient le droit de en manger. Dans ce cas, le roi David valorisait le salut de la vie de ses serviteurs plus que l'accomplissement réel de la loi et pardonné pour cela. Il en va de même pour les disciples du Christ. Pourtant, le Seigneur savait que les pharisiens n'étaient pas du tout de bonne humeur, et il ne suffisait pas de souligner que les disciples avaient faim pour se souvenir de cet exemple d'une figure historique célèbre. Par cet exemple, le Christ voulait montrer que la manifestation de la miséricorde était si essentielle et que les actions de David étaient justifiées que même le prêtre était autorisé à enfreindre la loi. De plus, dans l'exemple de David, il ne s'agissait pas de rompre le sabbat, ce qui était le cas des disciples, mais du pain sacré, ce qui était grave.

Mais l'exemple suivant que le Seigneur a souligné était plus puissant que le premier. "Le samedi, les prêtres du temple souillent le sabbat et sont

innocents." Autrement dit, le fait que pour faire un sacrifice, les prêtres devaient allumer un feu de joie et offrir un sacrifice le jour du sabbat, c'est-à-dire violer la loi chaque semaine, était pardonné et impardonnable pour les disciples du Christ qui nous avons faim? Et enfin, Christ a apporté le dernier grand argument pour prouver l'innocence de ses disciples. Si la violation de la loi était pardonnable aux serviteurs du temple, combien le pardon était-il encore plus important aux disciples du Seigneur qu'il avait permis? Et le dernier mot a mis fin à tout. "Si vous comprenez ce que signifie cette parole de Dieu." Je veux de la miséricorde et non des sacrifices ", a-t-il dit.

Oui, très chers, encore une fois, le Seigneur souligne l'importance et l'inviolabilité de la miséricorde. Car avec cette compréhension sont étroitement liés, et inséparables sont les nombreuses vertus qui sont les embellissements immuables du christianisme. Combien de fois nous sommes-nous glissés dans le piège du péché et n'avons trouvé d'autre moyen que de demander la miséricorde de Dieu? Et nous croyons naturellement que le Tout-Puissant nous pardonnera à chaque fois et nous aidera. Alors pourquoi considérons-nous qu'il est naturel de recevoir de l'aide et non de donner? Pourquoi le Père devrait-il être miséricordieux à chaque fois, même face aux péchés les plus odieux, et nous ne pouvons pardonner la moindre insulte à nos voisins? C'est pourquoi Dieu dit à travers les lèvres du prophète Osée et de son Fils que la miséricorde viendra, pas le sacrifice. Notre Père céleste veut que nous le servions en accomplissant des rituels et en y participant, mais aussi en ayant un service spirituel qui se manifeste dans une attitude aimable et humaine les uns envers les autres, avec amour, volonté de pardonner et volonté d'aider. Ainsi, le ritualisme extérieur ne remplacerait jamais la piété intérieure. Mais les deux sont nécessaires et se complètent. Nos âmes ont soif de sacrements et de rituels d'église, de prières et d'hymnes chantés à cette époque, de lecture et de prédication des Saintes Écritures, mais il ne suffit pas de recevoir cette nourriture spirituelle vitale, chers croyants. Ils doivent vivre avec amour et miséricorde, car la miséricorde est l'un des fruits de la passion. Je suis convaincu sans équivoque que vous comprenez tous, chers frères et sœurs, qu'en faisant l'aumône ou l'aumône, nous ne voulons pas seulement dire une aide financière, car il serait facile de donner de l'argent aux nécessiteux et de considérer la mission comme terminée. Mais la miséricorde est avant tout une question

de force spirituelle, de retenue et de dévouement. Parfois, rendre visite à un vieux grand-parent ou passer près d'un lit de malade prend plus d'une heure que de simplement donner de l'argent et se retirer. "Mercy se tient devant le jugement et non seulement défend, mais a également le juge juste comme avocat", a déclaré St. John Chrysostom. Une chrétienne a déclaré que lorsque sa belle-mère est tombée malade et que ses enfants pensaient qu'elle allait devoir s'occuper de leur mère pendant longtemps, ils lui ont tourné le dos. La mariée, ayant l'amour du Seigneur dans son cœur et ayant pitié de sa belle-mère, l'a prise et a commencé à prendre soin d'elle. Les gens se moquaient d'elle, disant qu'elle était une idiote et qu'elle lui avait imposé un fardeau supplémentaire. Et elle n'a pas murmuré, mais quand elle a vu l'image du Seigneur dans sa belle-mère, elle a été patiente et a pris soin d'elle. Trois mois plus tard, Dieu a amené l'âme de la patiente à lui-même, et avant cela, la femme plus âgée a tellement béni sa mariée qu'elle en était satisfaite jusqu'à la fin de sa vie. Bien-aimés, je souhaite que nous comprenions tous aujourd'hui que Dieu recevra avant tout miséricorde de notre part. Sachons qu'il n'y a pas de limites à la recherche de la perfection, à l'impression de l'image et de la ressemblance de Dieu sur nous et à un processus divin. Que l'image du Dieu miséricordieux soit un exemple pour chacun de nous, afin que nous nous efforcions d'être des enfants dignes de notre Père céleste et d'hériter de son royaume promis.

Amour, grâce, paix à tous, maintenant et toujours et pour toujours et à jamais, amen.

Avec mes bénédictions

Rév. Père David Margaryan

Prêtre Paroissial



ԿԱՐԵՒՈՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Արդեօք Գիտեի՞ք թե.-

- **Ինչպե՞ս կը հաղորդուին՝ ձեռնադրութիւն եւ օծում ունեցող հոգեւորականները, եթէ անոնք պատարագիչ չեն:**
Ի տարբերութիւն աշխարհականներու՝ անոնք կը բարձրանան խորան եւ կը հաղորդուին վայրագոյին ետեւը: Պատարագիչ եկեղեցականը Ս. Հաղորդութիւնը կը դնէ տուեալ հոգեւորականին ձեռքի ափին մէջ, քանզի անոնց ձեռքերը օծուած են Ս. Միւռնով: Եթէ հոգեւորականը հիւանդ է եւ չի կնար այցելել եկեղեցի, ապա մէկ այլ հոգեւորական Ս. Հաղորդութիւն կու տայ անոր տան մէջ կամ այլ տեղ մը:
- **Հոգեւորականները նոյնպէս կը խոստովանի՞ն Ս. Հաղորդութիւն ստանալէն առաջ:**
Ի հարկէ, անոնք ալ բոլորին նման պարտաւոր են անցնել ապաշխարութեան շրջանը, ուրիշ հոգեւորականի մը կողմէ մեղքերու թողութիւն ստանալ եւ նոր հաղորդուիլ: Պարզապէս հոգեւորականներու պարագային պահանջները աւելի խիստ են, քանզի որուն որ շատ տրուած է, անոնցմէ ալ, բնականաբար Աստուած աւելին կը պահանջէ:
- **Ի՞նչ այլ բացառութիւններ կան, երբ Ս. Հաղորդութիւն կը տրուի Ս. Պատարագէն դուրս:**
Քանի որ Ս. Հաղորդութիւնը կենսական անհրաժեշտութիւն է քրիստոնէային համար, եկեղեցին անկէ չի զրկեր նաեւ անոնց, որոնք ֆիզիքապէս չեն կրնար մասնակցիլ Ս. Պատարագին եւ հաղորդուիլ, օր. բանտարկեալներուն, բանակի զինուորներուն, հիւանդներուն եւ այլն:



ՇԱԲԹՈՒԱՆ ԱՂՕԹՔԸ

ՆԵՂՈՒԹԵԱՆ ԺԱՄՈՒՆ ԸՍՈՒՈՂ ԱՂՕԹՔ

Լեռներուն տակերը իջայ,
Երկիրը իր նիզերովը իմ բոլորտիքս էր,
բայց դուն իմ կեանքս գուրէն հանեցիր,
ո՛վ իմ Տէր Աստուածս:

Երբ հոգիս իմ մէջս մարեցաւ,
Տէ՛ր, քեզ յիշեցի ու իմ աղօթքս
քեզի՝ քու սուրբ տաճարդ՝ հասաւ:
Սուտ ունայնութիւններու նայողները
իրենց ողորմութիւնը թողուցին,
Բայց ես շնորհակալութեան ձայնով
Քեզի գոհ պիտի մատուցանեմ
Ու Ըրած ուխտս պիտի կատարեմ:
Փրկութիւնը Տէրոջմէն է»:

PRIÈRE EN CAS DE DETRESSE

Je suis descendu jusqu'aux racines des montagnes,
les barres de la terre m'enfermaient pour toujours;
Mais tu m'as fait remonter vivant de la fosse,
Éternel, mon Dieu! Quand mon âme était abattue
au-dedans de moi, je me suis souvenu de l'Éternel,
et ma prière est parvenue jusqu'à toi, dans ton
saint temple.

Ceux qui s'attachent à de vaines
Idoles éloignent d'eux la miséricorde. Pour moi,
je t'offrirai des sacrifices avec un cri d'actions
de grâces, j'accomplirai les vœux que j'ai faits :
Le salut vient de l'Éternel.

ՏՕՆԵՐ

Շաբաթ, 20 Յունիս 2020

Ս. Ներսես Մեծ Հայրապետի Եւ Խատեպիսկոպոսի Յիշատակութեան Օր

Հայ բազմաշնորհ կաթողիկոսներէն Է Ս. Ներսես Հայրապետը (353-373թթ.), որուն իրաւամբ տրուած Է Մեծ անունը: Ըստ պատմական աղբիւրներու՝ ան Ս. Գրիգոր Լուսաւորիչի տոհմէն Է, Յունիկ Հայրապետի թոռը: Փառէն կաթողիկոսի մահէն ետք, Հայոց Արշակ թագաւորի սենեկապան Ներսեսը, թերեւս աշխարհական, կը նկատուի կաթողիկոսական գահի ամենայ արժանի թեկնածուն եւ արքայի պարտադրմամբ կը ձեռնադրուի կաթողիկոս: Յետագային հայրապետական աթոռի գահակալը կը դառնայ Հայ Առաքելական Եկեղեցւոյ առաջին մեծ բարեփոխիչը եւ իր ժողովուրդի մեծանուն բարերարը: Անոր նախաձեռնութեամբ գումարուած Աշտիշատի ազգային-եկեղեցական ժողովին (354 թ.) առաջին անգամ կ'ընդունուին որոշումներ, որոնք կը կանոնակարգեն հոգեւոր-եկեղեցական կեանքը, կը սահմանեն ընտանիքի բարոյական սկզբունքները: Ներսես Մեծ Հայրապետի նախաձեռնութեամբ կը հիմնուին վանքեր ու դպրոցներ, բոլոր անտուններու ու աղքատ-ներու համար կը կառուցուին ապաստաններ ու հիւանդանոցներ: Հայրապետն իր ժողովուրդի կողքին եղած Է միշտ եւ ամենուր: Ձիրաւի ճակատամարտի յաղթանակը ձեռք բերուած Է նաեւ՝ Ս. Ներսես Հայրապետի շնորհիւ, որ ան ողջ ճակատամարտի ընթացքին մօտակայ լեռան վրայ բազկատարած աղօթած Է Հայոց բանակի յաղթութեան համար: Ազգաշէն ու եկեղեցաշէն այս գործունեութեան համար ալ Ս. Ներսես Հայրապետին կոչած են նաեւ՝ «Լուսաւորիչ սրտից»: Հայրապետի բոլոր այս ձեռնարկներուն աջակից ու գործակից եղած Է Խատեպիսկոպոսը, որուն պատմիչ Փավստոս Բիւզանդը կոչած Է նաեւ՝ Ներսես Հայրապետի աթոռ-ակից: Հայ Առաքելական Եկեղեցին իր սուրբերու շարքին դասելով իր երկու նուիրեալ զաւակներուն՝ անոնց



յիշատակը միասնաբար կը տօնէ Կաթողիկէ Սուրբ Էջմիածնի տօնին յաջորդող Շաբաթ օրը:

Կիրակի, 21 Յունիս 2020
Բարեկենդան Սուրբ Գրիգոր
Լուսաւորիչի Պահոց

Բարեկենդանը պահփին Նախորդող Կիրակին Է: Այս դէպքին բարեկենդանը Նուիրուած Է Ս. Գրիգոր Լուսաւորիչի մասունքները գտնելու գիւտին: Ս. Գրիգոր Լուսաւորիչի մասունքները կը համար-ուին բոլոր Քրիստոնէական եկեղեցիներու ամենամեծ սրբութիւններէն մէկը:



Տօնին առիթով եկեղեցին հաստատած Է շաբաթական պահք՝ Երկուշաբթիէն մինչեւ Շաբաթ:

Holidays
Saturday, June 20, 2020
Commemoration of St. Nersess the Great
and St. Bishop Khad

St. Nersess the Great, Catholicos of All Armenians (353-373) is one of the most prominent Armenian Pontiffs. According to historical sources he is from the family and lineage of St. Gregory the Illuminator, and grandson of the Armenian Patriarch Houssik.



Following the death of Catholicos Paren I (of Ashtishat), Nersess is a chamberlain (chief attendant or steward) for the Armenian King Arshak. Although a layman at the time, he is found to be the most deserving candidate for the throne of the Catholicos, and under the compulsion of the King is ordained as a priest, and consecrated as Catholicos. The Armenian Pontiff becomes the first great reformer of the Church and a renowned benefactor of his nation. Upon Nersess' initiative, a National Ecclesiastical Council is convened in Ashtishat in 354. Upon his initiative, decisions are made which are intended to regulate and bring order to the spiritual-ecclesiastical life, based upon the defined

moral principles of the family. Nersess the Great establishes numerous monasteries and schools. He builds hospices, residences and hospitals for the ill, homeless and the poor. The Catholicos was always with his flock. The Armenian people won the battle of Dzirav due to St. Nersess' unceasing prayers for victory on a nearby mountaintop, as the war was being waged on the field below. For his devout activity Nersess the Great is also called the "Illuminator of Hearts".

Bishop Khad was a supporter of Nersess the Great and was instrumental in the implementation of the Catholicos' initiatives and undertakings. Historian Pavstos Buzand identifies Bishop Khad as the coadjutor of the Armenian Pontiff, St. Nersess the Great.

Sunday, June 21, 2020 Eve of the Fast of St. Gregory the Illuminator

This is the Sunday preceding the week prior to the feast of Discovery of St. Gregory the Illuminator's relic, in the 5th century, lasting from Monday to Friday.

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏՕՆԱՑՈՅՑ ՅԱՌԱՋԻԿԱՅ ՇԱԲԹՈՒՄԱՆ

Յունիս– Juin

22, Երկուշաբթի – Պահք: Սրբոցն Եպիփանու Կիպրացոյն,
Բարեկայ հայրապետին եւ երից աշակերտաց նորին:

Lundi 22 – Jeûne. Fête des Saint Epiphane de Chypre,
du Patriarche Babel et de leurs trois disciples

23, Երեքշաբթի – Պահք: Սրբոցն Կոստանդիանոսի Թագաւորին եւ
մօրն նորա Հեղինեայ:

Mardi 23 – Jeûne. Fête du St. Roi Constantin et de sa mère Héléne

24, Չորեքշաբթի – Պահք

Mercredi 24– Jeûne

25, Հինգշաբթի – Պահք: Սրբոցն Թեոդիտոսնի Գաղատացոյն,
Թալիլեայ բժշկին եւ եօթն կուսանացն,

Որք յԱնկիւրիա կատարեցան:

Jeudi 25 – Jeûne. Fête de St. Théotide de Galatie, du médecin Babilia et des
sept viereges martyres en Angurie

26, Ուրբաթ – Պահք

Vendredi 26 – Jeûne

27, Շաբաթ– Գիւտ նշխարաց Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ

Samedi 27 - Fête de la découverte des reliques
de St. Grégoir L'Illuminateur.

ՀՈԳԵՀԱՆԳՍԵԱՆ ԿԱՐԳ

SERVICE POUR LE
REPOS DE L'ÂME



SERVICE FOR THE
REPOSE OF SOUL

ԿԻՐԱԿԻ, 21 Յունիս 2020



Տիկ. Անուշ Քեօփրիլեանի,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի
կատարուի իր սիրեցեալ ծնողաց եւ հարազատներուն՝

ԿԱՐԱՊԵՏ ԵՒ ՌՕԶԱԼԻ

ՔԷՕՓՐԻԻԼԵԱՆՆԵՐՈՒ

(GARABED & ROSALIE KEOPRULIAN)

ԼՈՒԹՖԻՔ ԵՒ ՊԱՏՐԻԿ

ՔԷՕՓՐԻԻԼԵԱՆՆԵՐՈՒ

(LOUTFIK & BADRIG KEOPRULIAN)

ԱՐԱՄ ՎԱՐԴԵԱՆԻ

(ARAM VARTIAN)

ՆՇԱՆ ՎԱՐԴԵԱՆԻ

(NISHAN VARTIAN)

ՊԵՎԸՐԼԻ ՔԷՕՓՐԻԻԼԵԱՆԻ

(BEVERLY KEOPRULIAN)

Ինչպէս նաեւ՝

ՔԷՕՓՐԻԻԼԵԱՆ ԵՒ ՃԱՄՈՒԶԵԱՆ

Գերդաստաններու համայն ննջեցելոց

հոգիներուն ի հանգիստ



Պրն. Տանիէլ Թօփալեանի,

Պրն. Միշէլ Թօփալեանի,

Մարի-Գլօտի, Ալիսընի, Ալեքսայի,
Տ. եւ Տիկ. Պերճ եւ Անի Էմիրզեաներու,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն
պիտի կատարուի իրենց սիրեցեալ կնոջ, մօր եւ քրոջ՝
ԱՅՏԱ ԷՄԻՐԶԷԻ
(AYDA EMIRZE)
Մահուան 40-ին առիթով:



Տիկ. Իրմա Պասմաճեանի,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն
պիտի կատարուի իր սիրեցեալ ամուսնոյն՝
ԳԱԲՐԻԷԼ ՊԱՍՄԱՃԵԱՆԻ
(KAPRIYEL BASMAJIAN)
Մահուան 19-րդ տարելիցին առիթով:



ՅԻՇԱՏԱԿՆ ԱՐԴԱՐՈՑ ՕՐՀՆՈՒԹԵԱՄԲ ԵՂԻՑԻ

ՀՈԳԵՅԱԼԳՍՏԵԱՆ ԱՂՕԹՔ

Քրիստոս որդի Աստուծոյ անոխակալ եւ բարեգութ,
գթա քո արարչական սիրովդ
ի հոգիս հանգուցեալ ծառայից քոց:
Յիշեալ յաւուր մեծի գալստեան արքայութեան քոյ:
Արա արժանի ողորմութեան քաւութեան
եւ թողութեան մեղաց:
Դասաւորեալ պայծառացո ընդ սուրբս քո
յաջակողմեան դասուն:
Չի դու ես Տէր եւ արարիչ ամենեցուն.
դատաւոր կենդանեաց եւ մեռելոց:
Եւ քեզ վայելէ փառք իշխանութիւն եւ պատիւ.
Այժմ եւ միշտ եւ յաւիտեանց յաւիտենից, ամէն:

ՆՈՒԻՐԱՏՈՒՌՈՒԹՅՈՒՆ ԵՎԵՂԵՑՈՅ

**DON
À L'ÉGLISE**



**DONATION
FOR THE CHURCH**

CHARITY DONATION FOR CHURCH

HYGIENIQUE PROTECTION:

Mr. & Mrs. Diran & Lalik Avedian \$750

CHURCH:

Mr. & Mrs. Mihran & Yercanik Ecityan \$150

Mr. & Mrs. Garbis & Hasmig Aposhian \$100

Mr. Ara Zafirian \$50

Ms Marie Noubarian \$20

RENOVATION FUND:

Mr. & Mrs. Aret Tasciyan \$100

FATHER'S DAY:

Mr. & Mrs. Hovsep & Mary Doramajian \$100

IN MEMORY OF

HER BELOVED FATHER NERSES AROYAN & GRANDFATHERS

MIHRAN MAGHAKIAN & ARMENAG AROYAN:

Miss Shoushan Aroyan \$50

IN LIEU OF FLOWERS DONATIONS MADE:

THE LATE BERCUHI IZMIRLIYAN:

Mr. & Mrs. Robert & Mari Sanlian \$200

THE LATE GARBIS FERAH:

Mr. & Mrs. Herman & Keguhi Carkciyan \$200

Mr. & Mrs. Garbis & Hasmig Aposhian \$50

Mr. & Mrs. Murat & Anahit Demirdogen \$30

THE LATE KRİKOR MERAKYAN:

Mr. & Mrs. Garbis & Hasmig Aposhian \$50

Mr. & Mrs. Murat & Anahit Demirdogen \$40

THE LATE NINETTE KOFTIKIAN:

Mr. & Mrs. Joseph Stepanyan & Parantzem Gevorgyan \$50

HOKEHANKISD (REQUIEM SERVICES)

IN MEMORY OF:

THE LATE SARGIS SARGSYAN:

Mr. Vahram Sargsyan \$300

THE LATE KAPRIYEL BASMAJIAN:

Mrs. Irma Basmajian \$200

THE LATE VAROUJAN BAGHBODARIAN:

Mr. & Mrs. Sarkis & Jeanette Demirjian \$300

Mr. Hagop Baghbodarian \$150

THE LATE DN. ARTO KEPEKCI:

Mr. & Mrs. Murat & Anahit Demirdogen \$30



Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Մայր
Տաճար
St. Gregory the Illuminator Armenian Cathedral of Montreal

Երեկոյեան Ժամերգութիւն եւ
Բժշկութեան Աղօթք - Առցանց
SERVICE DU SOIR ET PRIÈRE DE GUÉRISON
Diffusion en direct



Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



Երեկոյեան Ժամերգութիւն եւ
Բժշկութեան Աղօթք
Մայիս եւ Յունիս ամիսներուն համար
Ամեն Չորեքշաբթի երեկոյեան ժամը՝ 5:00-ին:
«Ամեն ինչ որ կը խնդրէք աղօթքի մեջ՝ հասատքով,
պիտի ստանաք» (Մտ. 21:22):

SERVICE DU SOIR ET
PRIÈRE DE GUÉRISON
AUX MOIS DE MAI ET JUIN

Veuillez-vous joindre par la page de Facebook.
Tous les mercredis soir à 17h:00
«Tout ce que vous demanderez dans la prière avec foi,
vous le recevrez» (Mathieu 21:22).

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-8008
stgregorychurch@gmail.com

Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



**Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ
Մայր Տաճար
St. Gregory the Illuminator Armenian Cathedral
of Montreal**

**ՍՈՒՐԲ ԳԻՐՔԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ
Ուղիղ հեռարձակում**



Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



**Ս. Գիրքի Սերտողութիւն Առցանց
Մայիս եւ Յունիս ամիսներուն**


Արժ. Տ. Դաւիթ Քիւյ. Մարգարեանին հետ
ամէն Յինգշաբթի երեկոյեան ժամը՝ 5-ին:

Կը հրաւիրենք մեր սիրելի հաւատացեալները
աղօթակից դառնալու եւ հաղորդուելու
փոխանցուելիք աստուածաշնչական գիտելիքներուն:

Սերտողութիւններուն հետեւիլ
Եկեղեցւոյ դիմատետրին միջոցաւ:

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-8008/
stgregorychurch@gmail.com

Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



ԿԻՐԱԿԱՄՏԻՑ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ

Ուղիղ հեռարձակում – En direct



Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



Շաբաթ, 27 Յունիս 2020

Ժամերգութիւն - երեկոյեան ժամը՝ 5-ին:

Samedi, le 27 Juin 2020

Office du soir à 17h00.